

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՅՑԵԼԵԼ Ե ԶՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ

06.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Ձորաղբյուր համայնք: Այցելության շրջանակներում մարզպետը Ձորաղբյուր համայնքի ղեկավարի և մարզպետարանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ հանդիպել է համայնքի ազգաբնակչությանը՝ լսել նրանց հուզող հարցերն ու խնդիրները, այնուհետև քննարկել և հանձնարարականներ է տվել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ:

Այնուհետև Կոտայքի մարզպետն այցելել է Ձորաղբյուրի համայնքապետարան: Տեղում քննարկվել են համայնքային գործընթացներին առնչվող հիմնախնդիրներ, ինչպես նաև անդրադարձ կատարվել համայնքային ենթակառուցվածքների գործունեությանը և բյուջետային ցուցանիշներին:

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է նաև համայնքի մանկապարտեզ, համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունում մարզպետը ծանոթացել է շենքային պայմաններին, շրջել է սենյակներում, զրուցել է մանկապարտեզի աշխատակիցների հետ և ծանոթացել մանուկների առօրյային:

Կոտայքի մարզպետն այցելել է նաև Ձորաղբյուր համայնքի Առողջության առաջնային պահպանման կենտրոն, ծանոթացել է աշխատանքային պայմաններին, մատուցվող ծառայությունների ուղղություններին և առկա բժշկական սարքավորումներին: Կենտրոնի տնօրենը մարզպետին ներկայացրել է համայնքի բնակչության հետ տարվող աշխատանքների ընթացքն ու հաստատության հիմնական գործառույթները:

Այցելության ավարտին ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը ծանոթացել է նաև Ձորաղբյուր համայնքում գործող <<ԲԻՈ-ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին պատկանող և լուրիկի արտադրություն իրականացնող ջերմատան աշխատանքներին:

Ջերմոցային տնտեսության տնօրենը Կոտայքի մարզպետին ներկայացրել է արտադրվող բանջարեղենի ստացման, շահագործվող տեխնոլոգիաների, ինչպես նաև ջերմատան ընդլայնման վերաբերյալ տեղեկություններ: